ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 67-Լ

«08» 08 2023 թ. գ. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սիսակ Ժորժիկի Խաչատրյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալի պաշտոնին փոխադրելու և Արմեն Գառնիկի Օսեյանին Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի պաշտոնին նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխանաբար՝ 2023 թվականի օգոստոսի 4-ի թիվ 359-Ա և 358-Ա հրամանները, այն, որ անհրաժեշտ է կատարել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, և ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Սիսակ Ժորժիկի Խաչատրյանի կողմից՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Արմեն Գառնիկի Օսեյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Գրիգորյան Լիլիթ - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,

Հանձնախմբի անդամներ՝

Պետրոսյան Սամինե -	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության ավագ դատախազ,
Մարտիրոսյան Հայկ -	ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ,
Նազարեթյան Արմինե -	ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետ,
Ղահրամանյան Մարուշ -	ՀՀ դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար,
Մանուկյան Լիաննա -	ՀՀ դատախազության առաջին բաժնի պետ,
Մուրադյան Փիրուզա -	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության տարածքային բաժնի ավագ մասնագետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը մինչև 2023 թվականի օգոստոսի 18-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ